***Կարգապահական գործ թիվ ԿԳ-25093***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի և Կարեն Խալաթյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Անդրանիկ Հակոբյանի և վերջինիս ներկայացուցիչ Հովսեփ Սահակյանի,

քննության առնելով փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 349), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Արարատմիլկ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Հակոբյանը (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**), հայտնել է, որ թիվ ԵԴԿ/4057/02/15 քաղաքացիական գործով 2016թ. «Մամիկոն Մանուկյան» իրավաբանական գրասենյակի հետ «Արարատ Միլկ» ՍՊԸ-ն կնքել է պայմանագիր և իրենց շահերը մինչև դատաքննության ավարտը պետք է ներկայացներ փաստաբան Մամիկոն Մանուկյանը, որի համար կանխիկ վճարել են 800.000 ՀՀ դրամ:

ՀՀ վերաքննիչ դատարանը 2022թ. ապրիլի 28-ին կայացրել է որոշում և «Արարատմիլկ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի: Փաստաբանը

**Թիվ ԿԳ-25093-2-Ա**
**08.04.2026թ.**

միտումնավոր ուշացրել է վճռաբեկ բողոք ներկայացնելը՝ խախտելով սահմանված ժամկետները, և ՀՀ Վճռաբեկ դատարանն անբաժանելի բարելավումների արժեքի հատուցման պահանջի մասով բողոքը չի ընդունել վարույթ:

Դիմողը նշել է, որ ունի հիմնավոր կասկածներ, որ Փաստաբանը «Բեկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ եկել է համաձայնության և միտումնավոր է ուշացրել վճռաբեկ բողոքի ներկայացումը:

Դիմողը հայտնել է, որ չնայած պայմանագրային պարտավորություններին՝ Փաստաբանը սույն թվականի հուլիսի 1-ին միակողմանի հրաժարվել է հետագա ծառայությունների մատուցումից՝ զբաղված լինելու պատճառով:

Դիմողը պնդել է, որ Փաստաբանի կողմից դիմողի շահերը պաշտպանելուց հրաժարվելուց հետո պահանջել է, որպեսզի Փաստաբանը տրամադրի իր մոտ գտնվող գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը, բայց վերջինս հրաժարվել է տրամադրել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, պարտավորեցնել վերջինիս վերադարձնել գործին առնչվող բոլոր փաստաթղթերը և վճարված 800.000 ՀՀ դրամ գումարի կեսը՝ պարտավորություններից վաղաժամ հրաժարվելու համար:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 22.12.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 07.01.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Փաստաբանին ծառայությունների դիմաց կանխիկ եղանակով վճարվել է 800.000 ՀՀ դրամ, սակայն Փաստաբանը անտեսելով Դիմողի բազմաթիվ պահանջները չի տրամադրել անդորրագիր:

Դիմողը նշել է, որ իրավաբանական ծառայությունների պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ տեղեկացել է «SMS» հաղորդագրության միջոցով 01.07.2025թ.:

**2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն «Արարատմիլկ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Հակոբյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 19.11.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի և «Մամիկոն Մանուկյան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 03.11.2016թ. կնքվել է իրավաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր, որով «Մամիկոն Մանուկյան Գրուպ» ՍՊԸ-ն ստանձնել է «Արարատմիլկ» ՍՊԸ-ի իրավունքների պաշտպանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննվող թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործով:

Փաստաբանը նշել է, որ հրաժարվել է «Արարատմիլկ» ՍՊԸ շահերի պաշտպանությունից, քանի որ վերջինս չի կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Փաստաբանն, անդրադառնալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2022թ. թիվ ԵԿԴ/4057/02/15 որոշման դեմ ուշացումով վճռաբեկ բողոք բերելուն, նշել է, որ այն պայմանավորված չի եղել իր գործողությունների հետևանքով:

Փաստաբանը նաև հերքել է հակառակորդ «Բեկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ համաձայնության գալու հանգամանքը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 22.12.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը հայտնել է, որ 03.11.2016թ. կնքված պայմանագիրը լուծվել է 11.12.2025թ., որի վերաբերյալ Դիմողին ուղարկվել է ծանուցում, սակայն վերջինիս մինչ օրս որևէ պատասխան չի տրամադրել:

Փաստաբանը նշել է, որ պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումով Դիմողին առաջարկվել է անձը հաստատող փաստաթղթով ներկայանալ գրասենյակ և ստանալ գործի նյութերը:

Ելնելով ողջ վերոգրյալից Փաստաբանը խնդրել է կարճել կարգապահական վարույթը:

**3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 21.11.2025թ. թիվ 336-Ա/ԿԳ-25093 որոշմամբ փաստաբան Մամիկոն Մանուկյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.8.2 և 3.8.4 (1,3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.11.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

**3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>**

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.01.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-7-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.01.2026թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 25.02.2026թ. ժամը 18:30-ին, 18.03.2026թ. ժամը 19:00-ին և 08.04.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

**Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Փաստաբան Մամիկոն Մանուկյանը ստանձնել է «Արարատմիլկ» ՍՊԸ-ի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է 03.11.2016թ. Փաստաբանի և Անդրանիկ Հակոբյանի միջև կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճեով* (**այսուհետ՝ Պայմանագիր**), *ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություն, այն է՝ ՀՀ դատարաններում քննվող թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում իրականացնել Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար՝ նույն պայմանագրին համապատասխան: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճեով:*

3. Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ սույն Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված վճարումը Պատվիրատուն կատարում է թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց՝ երկամսյա ժամկետում: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճեով:*

4. Դիմողի կողմից դիմումը ներկայացնելու պահին թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործը դեռևս ընթացքի մեջ է եղել: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. Դիմողը պնդել է, որ Պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարել է, իսկ Փաստաբանը հերքել է գումար ստանալու հանգամանքը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. Փաստաբանը հրաժարվել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները

կատարելուց՝ միակողմանի լուծելով Պայմանագիրը: *Սույն փաստը հաստատվում է 01.07.2025թ. հաղորդագրության լուսապատճենով:*

7. 11.12.2025թ. գրությամբ Փաստաբանը հայտնել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարող է ներկայանալ փաստաբանական գրասենյակ՝ փաստաթղթերը ստանալու համար: *Սույն փաստը հաստատվում է պայմանագիրը լուծելու և իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին ծանուցման պատճենով:*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մամիկոն Մանուկյանը փաստաբան է հանդիսանում 16.03.1999 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում կարգապահական տույժի չի ենթարկվել:

**7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

**Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 ենթակետի խախտման համար: Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ Մամիկոն Մանուկյանի նկատմամբ 3.8.4 (1,3) ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:**

**7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 ենթակետի խախտման մասով.**

**Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերի համաձայն՝** *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

**Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝** *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

*1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.*

*2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,*

*3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,*

*4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,*

*5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,*

*6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 3.8.2 ենթակետը փաստաբանին տալիս է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունք, սակայն այդ իրավունքը բացարձակ և հայեցողական բնույթ չունի: Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի իմաստով փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելը կարող է իրավաչափ համարվել միայն նույն ենթակետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Մասնավորապես՝ վստահորդի կողմից օրենքով արգելված գործողություններ կատարելու, փաստաբանի խորհուրդներին հակառակ այնպիսի վարքագիծ դրսևորելու, պայմանագրային պարտավորությունները կոպտորեն խախտելու, փաստաբանի պատիվը և հեղինակությունը անվանարկելու կամ պայմանագրով նախատեսված վճարումները կատարելուց հրաժարվելու հետ:

Տվյալ դեպքում գործում առկա նյութերով չի հաստատվել, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի կամ նրա ներկայացուցչի կողմից դրսևորվել է այնպիսի վարքագիծ, որը Կանոնագրքի 3.8.2 ենթակետի իմաստով կարող էր իրավաչափ հիմք հանդիսանալ Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու համար:

Ինչ վերաբերում է վճարման պարտավորությանը, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ Պայմանագրի 5-րդ կետով կողմերը հստակ սահմանել են վճարման կատարման ժամկետը՝ թիվ ԵԿԴ/4057/02/15 քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Մինչդեռ Դիմումը ներկայացնելու պահին նշված քաղաքացիական գործը դեռևս ընթացքի մեջ է եղել, այսինքն՝ Պայմանագրով նախատեսված վճարման վերջնական ժամկետը դեռ վրա հասած չի եղել: Ուստի, անգամ այն պայմաններում, երբ կողմերի միջև առկա է վեճ Պայմանագրով նախատեսված գումարը վճարված լինելու կամ չլինելու վերաբերյալ, ապա այդ հանգամանքը տվյալ դեպքում ինքնին չի կարող գնահատվել որպես վստահորդի կողմից վճարումները կատարելուց հրաժարում կամ պայմանագրային պարտավորությունների կոպիտ խախտում, քանի դեռ պայմանագրով նախատեսված վճարման ժամկետը չի լրացել: Այլ կերպ՝ Փաստաբանը չէր կարող Պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմք դարձնել այնպիսի պարտավորության չկատարումը, որի կատարման ժամկետը Պայմանագրի համաձայն դեռ չէր առաջացել:

Հանձնաժողովը գտնում է, որ իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից Փաստաբանի միակողմանի հրաժարումը չի կարող իրականացվել այնպիսի պայմաններում,

երբ հրաժարման համար Կանոնագրքով նախատեսված փաստական հիմքերը հաստատված չեն:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից միակողմանի հրաժարումը տվյալ դեպքում չի բխել Կանոնագրքի 3.8.2 ենթակետով սահմանված հիմքերից: Հետևաբար Փաստաբանի վարքագծում առկա է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

**7.2 Կանոնագրքի 3.8.4 (1,3) ենթակետի խախտման մասով.**

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

**Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝** *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝** *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝** *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է

հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն բացակայում են, ապա փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման***:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

**Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝** *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերությունների որոշակիությունից և կանխատեսելիությունից ելնելով՝ Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում է պայմանագիրը լուծվելու դեպքում որոշակի գործողությունների կատարմանը հետամուտ լինելու պարտականությունը՝ մասնավորապես, պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնելու մասով:

Նշված նորմի կիրառման համար անհրաժեշտ է, որ կարգապահական վարույթի շրջանակներում բավարար ապացույցներով հաստատվի, որ փաստաբանը պայմանագրի շրջանակներում փաստացի ստացել է հոնորար, ինչպես նաև այն, որ ստացված հոնորարի որոշակի մասի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Տվյալ դեպքում Դիմողը պնդել է, որ Պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարել է, իսկ Փաստաբանը հերքել է գումար ստանալու հանգամանքը: Կարգապահական գործում առկա նյութերով չի ներկայացվել գումարի փոխանցման, վճարման կամ Փաստաբանի կողմից դրա ստացման փաստը հավաստող ապացույց: Հետևաբար, միայն Դիմողի պնդման հիման վրա հնարավոր չէ հաստատված համարել, որ Փաստաբանը ստացել է հոնորար, և որ նրա մոտ առաջացել է չկատարված աշխատանքի դիմաց ստացված հոնորարի համապատասխան մասը վերադարձնելու պարտականություն: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չհիմնավորված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին, ուստի Կանոնագրքի 3.8.4-րդ

ենթակետի 1-ին պարբերության խախտման փաստը կարգապահական գործում առկա ապացույցներով չի հաստատվել:

**Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝** *պայմանագիրը լուծելիս փաստաբանը՝ ի թիվս այլնի, պարտավոր է նաև վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Նշված կանոնով փաստաբանի համար՝ ի թիվս այլնի, սահմանվում է նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու պարտականությունը: Ընդ որում, նշված պարտականության կատարումը պայմանավորվում է միայն պայմանագրի լուծմամբ և չի ենթադրում վստահորդի կողմից լրացուցիչ գործողությունների կատարում, որոնք ուղղված են փաստաբանի կողմից փաստաթղթերը վերադարձնելու պահանջի կատարման ապահովմանը:

Միաժամանակ, չնայած նրան, որ Կանոնագրքի հիշյալ դրույթը Փաստաբանի համար իմպերատիվ կերպով սահմանում է պահանջ՝ գործում առկա փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու մասով, այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործնականում Փաստաբանն ինքնին չի կարող ապահովել նշված պահանջի կատարումը, եթե վստահորդն իր հերթին չի իրականացնում որևէ գործողություն Փաստաբանից փաստաթղթերը ստանալու ուղղությամբ:

Այսինքն, Փաստաբանը ցանկացած դեպքում պարտավոր է վերադարձնել վստահորդին գործում առկա բոլոր փաստաթղթերը, սակայն վստահորդն իր հերթին պետք է ողջամտորեն իրականացնի որոշակի գործողություններ համապատասխան փաստաթղթերը ստանալու ուղղությամբ, ինչը կարող է դրսևորվել, օրինակ՝ փաստաթղթերի փոխանցման համար նախընտրելի ձևաչափի համաձայնեցված ընտրության մեջ:

Տվյալ դեպքում գործում առկա նյութերից հետևում է, որ Փաստաբանը 01.07.2025թ. հաղորդագրությամբ փաստացի հայտնել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից հրաժարվելու մասին: Հետագայում՝ 11.12.2025թ. ծանուցմամբ, Փաստաբանը հայտնել է, որ «Արարատմիլկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարող է ներկայանալ փաստաբանական գրասենյակ և ստանալ գործով առկա փաստաթղթերը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ընդունել է, որ ստացել է նշված ծանուցումը, սակայն պարզաբանել է, որ փաստաթղթերը ստանալու համար փաստաբանական գրասենյակ չի ներկայացել՝ կողմերի միջև հնարավոր վեճից խուսափելու նկատառումով, ինչի կապակցությամբ խնդրել է փաստաթղթերն ուղարկել փոստային եղանակով, իսկ Փաստաբանը նշել է, որ փաստաթղթերը գրասենյակից ստանալու վերաբերյալ ծանուցումից հետո որևէ արձագանք չի ստացել: Այս մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ կողմերի դիրքորոշումները հակադիր են. Դիմողը պնդել է, որ խնդրել է փաստաթղթերն ուղարկել

փոստային եղանակով, իսկ Փաստաբանը նշել է, որ փաստաթղթերը գրասենյակից ստանալու վերաբերյալ ծանուցումից հետո որևէ արձագանք չի ստացել:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ միայն այն հանգամանքը, որ փաստաթղթերը Դիմողի նախընտրած եղանակով՝ փոստային առաքմամբ, չեն ուղարկվել, ինքնին բավարար չէ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության խախտում արձանագրելու համար: Նշված խախտումը հաստատված համարելու համար անհրաժեշտ էր ապացուցել, որ Փաստաբանը հրաժարվել է վերադարձնել փաստաթղթերը, կամ այլ կերպ խոչընդոտել է վստահորդի կողմից դրանց ստացմանը:

Բացի այդ, նկատի ունենալով, որ 11.12.2025թ. ծանուցմամբ Փաստաբանը հայտնել է փաստաթղթերը վերադարձնելու պատրաստակամության մասին, Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի վարքագծում առնվազն չի հաստատվում փաստաթղթերը վերադարձնելու պարտականությունից խուսափելու կամ դրանց վերադարձը խոչընդոտելու հանգամանքը: Այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է նաև, որ փաստաթղթերի վերադարձի փաստացի իրականացումը ենթադրում է նաև վստահորդի կողմից ողջամիտ համագործակցություն և առաջարկված եղանակով փաստաթղթերը ստանալու հնարավորությունից օգտվելը: Մինչդեռ տվյալ դեպքում Դիմողը չի ներկայացել փաստաբանական գրասենյակ և չի օգտվել Փաստաբանի կողմից առաջարկված եղանակով փաստաթղթերը ստանալու հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության խախտման փաստը նույնպես չի հաստատվել:

**8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>**

**Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

*1) նկատողություն.*

*2) խիստ նկատողություն.*

*3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.*

*4) տուգանք.*

*5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:*

**Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ*

*հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Փաստաբանը 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 2-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 349) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն» և 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստում «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 ենթակետերի պահանջների խախտման համար:***

***2. Փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 349) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25093 կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.8.4 (1,3) ենթակետի պահանջների խախտման հատկանիշների մասով կարճել:***

***3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

**Ծանոթություն**. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

**ՀՀ փաստաբանների պալատի**
**կարգապահական հանձնաժողովի**
**նախագահ՝** **Տաթևիկ Շալջյան**

**թիվ ԿԳ-25093-2-Ա**
**08 ապրիլի 2026թ.**
**ք.Երևան**